ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.** Ժաննա Անդրեասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** Ժնև, Շվեյցարիայի Համադաշնություն, մարտի 21-22

4. **Հրավիրող կողմը. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ**

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.* Կայուն զարգացման տարածաշրջանային ֆորումի Դեպի հավասար հնարավորությունների աշխարհ թեմայով կլոր սեղանի ընթացքում հանդես գալ իբրև բանախոս և ներկայացնել Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության նվազեցման ուղղությամբ հաջող փորձը

6. **Քննարկված թեմաները.** Կլոր սեղանի թեման էր խտրականության դեմ պայքարը, որի շրջանակներում ներկայացվում էին մի շարք երկրների փորձը՝ Հայաստան, Թուրքիա, Տաջիկստան, Իռլանդիա, Սերբիա:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** Բացի հիմնական ելույթից՝ Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության նվազեցման շուրջ հաջող փորձի ներկայացումից, նաև որպես ՀՀ ներկայացուցիչ, պայմանավորված ԱԳՆ ներկայացուցչի և Շվեյցարիայի Համադաշնությունում հյուպատոսական ներկայացուցչության պատասխանատու անձի բացակայությամբ, չնախատեսված խոսք ունեցա Կայուն զարգացման տարածաշրջանային ֆորումի մարտի 21-ի պանելային նիստին՝ հաշվի առնելով, որ ներկայացվում էր տարբեր երկրներում կայուն զարգացման նպատակների մասով իրականացված գործողությունները և երկրների զգալի մասը նախապես խոսք ունեին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հավաքի ֆորմատը փաստաթղթերի ստորագրում կամ որոշման ընդունում չէր նախատեսում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.** Հավաքի ժամանակ քննարկվեց մի քանի հաջող փորձ, որոնց հետագա ուսումնասիրությունը և Հայաստանի համար կիրառելիությունը կարող է հեռանկարային լինել: Խոսքը մասնավորապես Մակեդոնիայի կողմից գենդերային զգայուն բյուջեի ներդրման փորձն էր, որի ուղղությամբ ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով պարտավորություն է վերցրել նաև Հայաստանը: Այս փորձի ավելի մանրամասն ուսումնասիրությունը կարող է իրականացվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ԵՄ տեխնիկական աջակցության փորձագենտեի հետ համատեղ՝ նպաստելով գենդերային զգայուն բյուջեի ներդրման ուղղությամբ Հայաստանում գործողությունների ծրագրի մշակմանը և իրականացման մեկնարկին առաջիկա տարվա ընթացքում: Կազմակերպական տեսանկյունից նման միջոցառումներին մասնակցության արդյունավետության բարձրացման համար նպատակահարմար կլինի հետագայում ԱԳՆ-ից նախապես ստանալ մանրամասն տեղեկատվություն հնարավոր հնչեցվելիք հարցերի շրջանակի և ելույթների նպատակահարմարության, երկիրը ներկայացնող տարբեր տեղեկատվական նյութերի՝ պատվիրակության կողմից բերելու և համապատասխան տարածքներում ներկայացնելու-տարածման համար տեղադրելու մասով:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

26.03.2019թ.